

ՎԱՅՆԵՐԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 ռ.
Վեցամս. 25 "

ՎՐՏԱՍԱՀԱՐ

Տարեկ. 13 ֆր.
Վեցամս. 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկ. 30 սենդ.

ԿԱՆԻՍԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՅՈՒՆ

Գրութիւնքեա
չեն տրուիր:

Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՅՈՒՆՎՐ. 7 ՀԻՆԴԵԱԹԻ 1904

ԹԻԻ 289

Նոյն Կաղանդի ՍԱԼՕՆԻ ԶԲՈՍԱՆՔ

Քաղթօնի վրայ տպագրուած 10 հատ գու-
նաւոր ու գուարճալի նկարհանուկներ: Գին 40
փարայ ողջ: Կը ծախուի Տ. Կարապետ Աստուածա-
տուրի մօտ, Շէրիֆ բաշա:

ԱԶԳԱՅԻՆ

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը Էսայեան
Մկրտիչ Էփ.ի նախագահութեամբ մասնախումբ
մը կազմեր է՝ նուագահանութիւն կարգադրու-
թեան համար, որ Մեծ Պահոց Միջինքի յաջորդ-
կիրակին պիտի կատարուի եղեր ի Բերա թաղա-
պետական թատրոնի մէջ:

—Վիէննայի մէջ հաստատեալ տիկին Աղաւ-
նի Քէրէստէճեան, որ Աւստրիացիի մը հետ աւ-
մուսնացած է, փափաքեր է որ իւր և ամուսնոյն
մահուանէն ետքը Աղդին մնայ տեղւոյն գրամա-
տան մէջ ունեցած 1000 ոսկին, և այս փափա-
քին գործադրութեան համար այժմէն կատար-
ուեր են օրինական գործողութիւնները:

—Երուսաղիմայ պատրիարքական Փոխանորդ
Գեր. Տ. Գէորգ երկսկսպոս Երէցեան՝ հրաժարա-

գիր ղրկեր է Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրի-
արք Հօր:

—Կովկասու կուսակալի օգնականը գրեր է
Էջմիածնի սինոդին թէ՛ Զարին հրամանաւ փակ-
ուած է Շուշիի Հայոց թեմական դպրոցը:

—Իզմիրի մաքրատան արհիւակալ Ստեփան
Էֆէնտի ճշմարտախօսեան իւր անշարժ կալուած-
ները (1500 ոսկիի արժողութեամբ) Աղդին նուա-
րեր է, պայմանաւ որ ինքն ու ամուսին տիկինը
մինչեւ ցմահ ստանան անոնց վարձքը:

—Խառն ժողովը իր վերջին նստին մէջ, Եւ-
րուսաղէմի մօտին հետեւեալ որոշումները տուեր է:

1. Ստուգել պարտքին աճելուն պատճառը.
2. Երուսաղէմի մատակարարութեան իր բո-
ւր ճիւղերով ելմտացոյցի վերածուիլը.
3. Ճշգրէ կալուածական շինութիւններէ խն-
պագային համար սպասուած ակնկալութիւնները.
4. Վանական վարչութեան կեդրոնէ հպոն
տառուած կանոնադրին համաձայնիլը.
5. Վանական վարչութեան կանոնաւոր կէ-
պով վերակազմուիլը.
6. Խոտացուած համարատուութեան օր ա-
ռաջ իրականացումը.
7. Երկպառակութեան բարձուիլը.

Խառն ժողովը այս եօթը կէտերուն գործա-
դրութեան համար իր կողմէ երկու կարող ներ-
կայացուցիչներ ղրկել որոշեր է Երուսաղէմի Ս. Ե-
նեկայացուցիչներու անուանումը ուրիշ նստի
յժուարմ

— Պաշկար իշխանապետութեան Պաշտոյ դորժակատարին կողմէ Պատրիարքարանի ծանուցուեր է որ Տ. Ներսէս եպիսկոպոսի սուաջնորդական ընտրութիւնը Պաշկարիոյ կողմէ ճանչցուած ու հարկ եղած արձանագորութիւնը կատարուած է:

ՏԵՂԱԿԱՆ

ԿՐԿՆԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի օրը քաղաքիս Հայ շրջանակներուն մէջ լուր մը տարածուած էր թէ՛ նոյն օրը Հօրեջ Պօնաւրի մէջ կրկնամասնութիւն մը տեղի ունեցած է, նախագահութեամբ Եգիպտոսի Առաջնորդ Սրբազանին և պատկազրութեամբ Գահիրէէն յատկապէս բերուած Տ. Աւետիս քահանայ Շաղոեանի: Ուստի ըստ խմբագրական պարտականութեան՝ երեքշաբթի առաւօտ փութացինք Սրբազանին ներկայանալ, իրմէն տեղեկանալու համար խնդրոյն մանրամասնութիւնքը:

Ահաւասիկ Սրբազան Առաջնորդին և մեր միջև անցած խօսակցութիւնը:

— Սրբազան Հայր, երէկ իմացանք որ Գահիրէի աղգայիններէն Գ. Ս. ի այրի քոյրը որ առկէ 11 ամիս առաջ թէեւ Բ. անգամ ամուսնացած՝ բայց ամուսինը պսակուելէն քանի մը օր վերջը ձգելով հնդկաստան մեկնած ըլլալուն, կինը այդ անգամ ամուսնացուցեր էք ուրիշի մը հետ:

Սրբ. — Այո, ճշմարիտ է, որովհետեւ Բ. ամուսինը տիկնոջ գոհարեղէնները և գրամօթիտը յափշտակելով՝ հնդկաստան փախած է, ո՛չ թէ մեկնած:

— Անշուշտ նոյն ամուսնութիւնը լուծեալ համարելու համար պէտք եղած ամուսնալուծման հրամանը ըստ օրինի առնուած է Վեհ. Հայրապետէն:

— Այո՛, տեղեկագրած էինք Հայրապետին:

— Եւ անշուշտ երէկուան պատկազրութիւնը կատարելու համար Հայրապետական հրամանագիրն ալ եկած է:

— . . . Ո՛չ:

— Ո՛չ . . . ի՛նչպէս . . .

— Մեք թէեւ իմացուցինք Վեհափառին, բայց նկատելով որ այս միջոցիս Ն. Ս. Օծու թիւնը ժո-

մանակ չունի այստեղակ խնդիրներով զբաղելու, թող պիտի ուշանայ արո՞սն ագիրը, հրաման տուինք պատկազրութեան:

— Ներեցէք Սրբազան Հայր, հարցնել թէ՛ նախապէս վստահ էիք գալիք Հայրապետական պատասխանին նպատակաւ ըլլալուն:

— Էթէնտիմ, տիկնոջ ամուսինը սոսկալի անպիտանին մէկն է եղեր:

— Գոնէ ինչպէս էր գիմում մը ընել Պատրիարքարանին, որ կարծեմ այս տեսակ խնդիրներու միջամտելու ձեռնհասութիւնն ունի:

— Պատրիարքարանին ալ գրէինք ի՛նչ՝ կաթողիկոսին պիտի հարցնէր ու դարձեալ երկարեր:

— Բայց եթէ վաղը ամուսինը զղջալով վերադառնայ, որուն նման շատեր տեսնուած են, եւ . . .

— Զի վերադառնար, անպիտանին մէկն է եղեր, բաց ասկից, Պօմպէյի Թաղ. Խորհուրդէն ալ թուղթ մը եկած է որ կը տեղեկացնէ թէ՛ Թաղ. Խորհրդոյ ներկայութեանը «կինս չեմ ուզեր» ըսեր է:

— Ինչ որ բաւական չէ կարծեմ ամուսնութիւնը լուծելու:

— Բայց ինչպէս որ ըսինք, այդ մարդուն անպիտան մէկը եղած ըլլալը հաստատողներ չա՞տ կան:

Ակներեւ էր թէ սոյն խնդրոյն մէջ Սրբազանին առած քայլերը հակառակ էին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ կանոնաց, ուստի վերջ տուինք խօսակցութեան և մեկնեցանք իր քովէն:

Ի նպատակ Զեթունի Բարեսիրացին

Ցուցակ Գ.

Մեծ. Տեսութ	Ղրջ. ողջ
Նախորդ ցուցակներուն գումարը	790, 25
Միհրան Պէօրէքեան	10
Չայլաքեան եղբարք	40
Ճիվան Եսայեան	20
Հայկ Էքիզլէր	97, 50
Թորոս Թէլեան	48, 75
Խորէն Խորխոռունի	20
	1034, 50

—Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ՛ Տիգրան Երկաթ Միութեան ընթերցարանին համար պէտք եղած յարմար շէնքը շարժուա մէջ վարձուեցաւ :

—Արշաղոյսի Տնօրէնը՝ Տ. Ե. Թորոսեան կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ՛ ինք կարենոր գործերով Աղեքսանդրիա մէկ քանի օր ևս մնալ ստիպուած ըլլալով, թերթին հրատարակութիւնը պիտի սկսի առաջիկայ նոր տարուոյ Ա. օրը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սելանիկէն դեկտ. 30 թուականաւ կը ծանուցանեն թէ՛ Մակեդոնիոյ ընդհ. քննիչ Հիլմի բաշան և Սելանիկի վալին գժտուած են: Վալին չուզեր հնազանդիլ Հիլմիի հրամաններուն: Այս գժտութիւնը սակայն ու է հոգ չպատճառեր 'Իրան, վասն զի այս կերպով ժամանակ կը չահի չգոհացնելու համար եւրոպական հիւպատոսները

—Մալթայէն ամսոյս 5ին կը հեռագրուի թէ Ռուսական 5 թօրքիլանաւ մեկնած են Արևելք:

—Բեդրսպուրկէն նոյն թուականով կը հեռագրուի թէ Ռուսիոյ պատասխանը հաշտարար է. ճաբօնի առաջարկներէն շատերը ընդունուած են, և յոյս կայ թէ 2օրը պիտի կրնայ յունական Ծնունդին յայտարարել թէ խաղաղութիւնն ապահովուած է:

—Թոքթօէն նոյն թուականաւ կը հաղորդեն թէ Ռուսական նաւատորմը Վլատէվօթօք համախմբուած, կը պատրաստուի կռուելու:

—Լանտոնէն յունվար 6 թուականով կը ծանուցանեն թէ կէս պաշտօնական թերթերու կարծիքով Ռուսիոյ և ճաբօնի միջև խզումը կատարուած իրողութիւն մը կը նկատուի: Վլատիվօթօքի մէջ զինուորական բուռն օգեւորութիւն մը կը տիրէ. վայրկեանէ վայրկեան պատերազմի կը սպասուի:

—Պոլիսն այցելող վեհապետներու և բարձր անձնաւորութիւններու հիւրամեծարի պաշտօնն ունեցող Ահմէտ Ալի բաշայի որդին Իզլէթ պէյ աքսորի դատապարտուեր է՝ սուտ զրպարտութեամբ: Սոյն դէպքը մեծ յուզում պատճառեր է ի Պոլիս:

—Վերջերս Նիւ-Եորքի նահանգին մէջ էսքրիյու գետին վրայ կամուրջի մը բացումը տեղի ունեցած է. այս կամուրջը որուն շինութիւնը եօթը տարի տևած է, միակտուր կախուած կամուրջ մ'է ու աշխարհի մէջ գտնուած այդ տեսակ կամուրջներուն մէկ հատիկն է:

Շինութեան համար 10 միլիոն տոլար (2 միլ. անգլ. ոսկի) ծախք եղած է: Վեց երկաթուղիի գիծ կանցնին վրայէն. 2 ճամբայ կառքերու համար, 2 ճամբայ քալողներու և 2 ալ պիսիքիթի համար:

Ն. Բ. Խտիվին գահակալութեան տարեդարձին առթիւ, վաղը՝ ուրբաթ 21 թնդանօթներ պիտի նետուին Միջնաբերդէն, Ապպասիէի զօրանօցէն, Աղեքսանդրիաէն և Բօրսայիտէն:

ՏՕՐԹՕՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից քաղաքապետանց Իշխանին

Այս անգամ Աղեքսանդրիա հաստատուած շինելով, պատի ունի յայտնելու յարգելի Հայ հասարակութեան, որ անեւ օր առաջները ժամը 9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կրնան իր տան մէջ, Աթթարին փողոց թիւ 31, Մզկիթին դէմը, երկրորդ յարկ:

Ներքին եւ փրսքուծական հիւանդութիւններու հետ, կը դարմանէ նաեւ երախաներու հիւանդութիւնները, 15 օտար մասնագիտական փորձառութեամբ:

Յաջող կերպով կը դարմանէ նաեւ Աթիօնա-մոլութիւնը եւ Մորժիկաւոլութիւնը, որոնց դեմ հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ Պարսիստանի մէջ հազարաւորներ անվնաս քողած են այդ մոլութիւնը:

ԹԱՏՐՈՆ

Յառաջիկայ չաբաթ գիշեր Բիրամիտ թատրոնին մէջ՝ պիտի ներկայացուի «Կոյրը և Կուզը» անուն բարոյալի թատերախաղը և ծիծաղաշարժ զաւելտ մը, տաճկերէն լեզուաւ, ի նպաստ Եգիպտահայ թատերաբեմի առաջնակարգ դերասան Պ. Լեօն Շիշմանեանի:

Լիայոյս եւնք թէ՛ ամեն ատեն ծափերով ու կեցցէներով իր գոհունակութիւնը առ Շիշմանեան յայտնող թատերասէր հասարակութիւնը պիտի փութայ չաբաթ գիշեր ալ իր արդիւնաբեր ներկայութեամբը պատուել համակրելի դերասանապետը:

ԳՐԶԻ ԶԲՕՍԱՆՔ

ԱՀՌԵԼԻ ԱՐԿԱԾ ՄԸ

Մայիսի գեղածածաղ օրերէն մին էր. փարաւոններու երկրին մէկ խորշը՝ Ալեքսանդրիոյ հովտուն ծովեզրը եզրղ Մեքսը՝ արեգական հերատապ ճառագայթներուն տակ բոցաշունչ հրաբուխի մը կը նմանէր. Պայծառ երկինք մը, իբր զարդ ունենալով ցիրուցան սպիտակ ամպերու խումբ մը, զմայլելի տեսարան մը կը ներկայացնէր:

Այդ օրը էութեանս ամենատխուր օրերէն մին էր, ու անտեղեակ գնացքիս՝ առաւօտուն շատ կանուխէն Մէքս գացած ըլլալով աստանդական կը դեգերէի՝ փարատելու համար վշտացս ու մտածմանցս յորձանքը, որուն մէջ խորասուզուած էի:

Քանի մը ժամեր այդպէս շրջելէ վերջ, կանգ առի զբօսարանի բարձրաւանդակին վրայ, մտամփոփ և խահուն՝ երեւակայութեանս ամբողջ ուժովը դիտելով միապաղաղ ծովը իր չրփչրփնրով, ձկնորսաց նաւակները գալարուն ուղկաններով ու նաւահանգիստը շրջապատուած ամեն տեսակ գլորօշներ կըող հարիւրաւոր վաճառանաւերու շարքով:

Յանկարծ հարաւային քամի մը սկսաւ փչել որ երթալով ահռելի փոթորիկի մը փոխուեցաւ. ծովը ուր քիչ մը առաջ կը ննչէր, ընդոստ արթնցաւ ու ամենի ալիքներ սկսան զիրար հա-

լածելով դալ փշրուել ծովափին վրայ. Այն միջոցին երկնից կամարն ալ սև ամպերով ծածկուեցաւ, փայլակները սարսափ կը սփռէին մթնոլորտին մէջ տեղատարափ անձրև մը սկսաւ:

Հեռուն, շատ հեռուն փոքրիկ սև կէտ մը նշմարելի եղաւ որ ծովուն փրփաղէզ ալիքներու թաւալումներուն խաղաղիկ դարձած՝ հետզհետէ կը մեծնար՝ նաւակներն էր սա անթի, օղեկորոյս որ անոյրմաբար ահռելի ճակատագրին մատնուած կը տատանէր աննուաճելի ալիքներուն վրայ:

Նաւակին մէջ երկու երիտասարդներ կը գտնուէին որոնք նոյն օրը օդին գեղեցկութենէն հրապուրուած պոռոյտի ելած էին, սակայն փոթորկէն բռնուելով իրենց յուսահատական ձայները մթնոլորտը կը սարսուեցնէին:

Ամբողջ Մեքս ոտքի ելած էր ու ազատարարի նաւակ մը յաղթանդամ ձկնորսներով ճամբայ ելաւ, բայց դեռ նաւակին չի հասած վիթխարի ալիք մը բարձրանալով ինկաւ նաւակին վրայ ու զայն քշելով բերաւ ծովեզրէն քիչ մը հեռուն գտնուած սուր ժայռին վրայ փշրեց:

Սարսափի ահ մը թռաւ ամեն բերնէ. ես ալ ուղեցի աղաղակել, բայց անկարող էի. ուստի վերջին ճիգ մը ընելով բարձրավանդակէն դէպի ծով նետուեցայ, ու հազիւ թէ խորասուզուած էի երբ . . . արթնցայ, մեծ զարմանք պատճառելով ինձ, վասն զի տեսածս երազ մ'էր ու ծով նետուելս ալ անկողնէս վար ինկած ըլլալս էր:

ՄԵՆԱԿԵԱՑ

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Նոր Բաղդիթ պատկերազարդ, Ֆրանսահայ երկու հասր՝ 1874 մեծադիր երեսներով:

Ազգ. — Մատենագիրն փափաքելով որ իր երկասիրութիւնն մատչելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մանաւանդ որ իւր նպատակն է ամենեւին չճահիլ, այլ վնասով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատորները ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն:

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով:

M. G. DE LUSIGNAN

108. Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ:

Իսկ եգիպտոսի մէջ կը գտնուի Օր. Քրիստինէ Գաղաղեանի մօտ, վարժուհի ի Գահիրէ:

Ծ Ի Ծ Ա Ղ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐՁԱԴԱՆԳ

«Տօքոր Թերաքորեանիս քերթիպը»

— Էօհէօ . . . Էօհէօ . . . հէփշիւ . . .

— Ի՞նչ է ան Ոնոփրիոս աղա, հարբօ՞ւիս ես եղեր .

— Սո՛ւն եղիր հոգիդ սիրես . ես իմ ձեռքով . . . հէ . . . հէփշիւ . . . ըրի :

— Պաղ առած ես ,

— Պաղ առած ես ըսելն ալ խօսք է . առտուն արթնցայ նէ՛ փառ կտրած էի :

— Կերևայ թէ գիշերը վրադ բաց պառկած ես :

— Ձէ՛ աղբար, օլտու օլալը՝ երկու պարանիէ կառնեմ :

— Ուրեմն ցորեկը քրտներ ու . . .

— Ձէ՛ աղբար, չէ՛ նոր լրագիր մը եկեր է մէջը գրեր է որ . . . հէփշիւ . . . գիշերը պատուհանները բաց պառկելու է . . . Էօհէօ, Էօհէօ . . . Գառնիկս ալ բարով խերով ըսեր, կարգացեր է ու եկաւ ինծի ալ համոզեց որ . . . հէ . . . հէ . . . հէփշիւ հայրիկ . պատուհանը բաց պառկէ :

— Էյ . . .

— Ես ալ անանկ ըրի . մէյն՝ գիշերը քունիս մէջ՝ մարդ չե՛նք մի, պաթանիէն վրայէս նետեր եմ . արթնցայ նէ՛ խազըիս կտրած էի . հէփշիւ . . .

— Պէ աղբար, դուն ալ բէք աճայիպ մարդ ես, ամէն ըսածի կը հաւատացուի՛ :

— Աղբար՝ անանկ պիչիմլի մը գրեր, անանկ շաթաֆլը մաթաֆլը բաներ ըսեր է որ դուն ալ խանձիշ կըլլաս, մարդս կուզէ քնանայ կուզէ արթուն ըլլայ՝ գիշեր ցորեկ մաքուր օդ ծծելու է որ քաջառողջ ըլլայ ըսեր է . է՛յ, ո՞վ չուզեր քիքաջառողջ չըլլայ :

— Ատոր համար գիշերը պատուհանը բաց պառկելու է ըսեր է .

— Հա՛ աղբար . հա՛, հէփշիւ . . . ատանկ է գրեր :

— Աղէկ ամա՛ ցորեկները մարդս արթնուածեան մէջ կրնայ սենեակին պատուհանը բանալ ու միևնոյն առեն ցուրտէն պատուարուիլ . բայց գիշերը քնացող մէկը կրնայ զգուշանալ ցուրտին դէմ, երբ պատուհանը բաց թողու .

— Ես ի՛նչ գիտնամ . . . ա՛խ, սա Գառ . . . նի . . . հէփշիւ . . . կիս . . . ի՛նչ ըսեմ .

— Ինծի հարցունես նէ՛ պաթանիէին տակը մանեկէ ետքը՝ պաթանիէն քառեօլային կարեցէք կամ չորս ծայրէն կապեցէք տէ անանկ պատուհանը բացէք ըսեր նէ՛ խելքի մօտ կըլլար :

— Ի՛նչ կըսես ճանրմ . դուն ալ բէք կէնիշ կը խօրաթես կոր, թիմարխանա՞ն ենք որ քառեօլային պիտի կապուինք . . . հէփշիւ .

— Ուրիշ կերպ չըլլար պատուհանը բաց պառկելու համար :

— Է՛հ, դուն կուզես նէ անանկ ըրէ, ինծի պէտքը չէ՛ :

— Ան չէ ամա, ո՞ր խելացի դաւիթը տուեր է ադ թէրթիպը .

— Ես չեմ ճանչնար . Գառնիկս՝ տօքթոր Թէրաթուրեանը գրեր է ըսաւ .

— Տօքթոր Թէրաթուրեանը ո՞վ է :

— Նէ՛ պիլէյիմ պէն .

— Սողլամ բարա ատ տօքթորը անոր համար գրեր է որ՝ ես ու դուն գիշերը պատուհանը բաց պառկինք աշագղանիշ ըլլանք հիւանդանանք տէ՛ ետքը իրեն կարօտ ըլլանք տէյի :

— Իրա՛ կըսես աղբար .

— Ուրիշ բան չեմ կրնար ըսել . աշխարհի ստեղծումէն ի վեր եկող դացող տօքթորները «գիշերը պատուհաններնիդ գոց պառկեցէք» կըսեն . ատոնք խելացի չեն տէ ատ քուկին Թէրաթուր տօքթորի՞դ խելացի է եղեր :

— Ատ ալ կայ եա՛, Աստուած կարօտ չընէ .

— Աստուած կարօտ չընէ ըսելով չըլլար . դուն հիմա չուտ մը տուն գնա՛ աղւոր ըխամուռ մը եփէ՛ տէ խմէ պառկէ, որ քրտնիս ու ինքզինքդ գտնաս . ականջ մի՛ կախեր ատանկ պարապաբանութիւններուն . ապա թէ ոչ՝ մաքուր օդ ծծելու համար տօքթոր Թէրաթուրեանին իրա՛ կարօտ կըլլաս :



ՅԵՄԱԳԻՐ

Աժանու Բոժոժիկ եւ Ընկ.

Սուգ էլ Ֆըւթ

Վերջերս իր երիտասարդ գաւկին շնորհիւ քիչ չատ ապրուստը շտկող տիկին Մահիկ որ 4 տարիէ ի վեր աղքատախնամէն ալ ամսական կ'առնէ, դեկտեմբերի ամսականը երթալ առնելու համար պոլսական կնոջ մէջ պատուաւ քապուռ մը եւ եաղրը պոետաւ մը փոխ առաւ:

Գահիրէ

Տէր Սապահեցէեան հայր հարցման մը պատասխանելով ըսաւ թէ՝ ասկէ ետքը պէտք եղած դիւրութիւնները պիտի կրնան գտնել կրկնամուսնութիւն ընել ուղղութեամբ, բաւական է որ մեծաւորին հետ անդամ մը «տեսնուին» ըսեն:

Ամուսնալուծում եւ կրկնամուսնութիւն ընել ուղղութեամբ ազօթքի կեցած են ժամ առաջ նորին մեծաւորութեան վերադարձին համար:

Խարբըշխենց Շուշան խաթունն ալ կը մտածէ որ արդեօք իր թուր՝ Անտիկը, աղբօրը աղջկանը հետ պիտի կրնայ կարգել:

Բոժ. — Հիշ թող չի մտածէ, սնտուկին մէջ պահած չրխընիկներովը «տեսնուին» մը ըսելուն պէս՝ տեսնուիր չալեց գնաց:

Վ Ի Պ Ա Թ Ե Ր Թ

Մեր այսօրուան համարով Եգիպտաբնակ բաժանորդաց կը շնորհակալուին Վառնայի մէջ հրատարակելի «Վիպարներ» վիպասանական հանդէսին մէջ ազգաբարոյ թիւնը, մեր կողմանէ աւելցնելով թէ բաժանորդագրուիլ ուղղութեամբ կատարելապէս կրնան վստահիլ հրատարակչին խոստմնապահութեանը, որովհետեւ Վառնայի մէջ առաջնակարգ ու ճոխ տպարանի մը տէրն ըլլալով, ցարգ ըսկած վէպերը կ'ստատ թողած չէ:

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

«Հայեցի»ի սպարանին մէջ դիրամտացւոյի գնով կը սպագրուին առեւտրական տուներու հաւարաւեն լեզուէ՝ Բարիգեան վերջին դրութեամբ հետաքրքրաշարժ, պատկերազարդ եւ գունաւոր փոփոխի ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ այցելման, հասցէտուն, հարսանեկան հրաշխագիր մահագր, նամակագրութիւն, պահարան, տուակ. եւն Ուրիշ քաղաքներէ եղած յանձնարարութիւնի ալ փութով կը կատարուին:

ՅԱՆՈՐ ԳԱՐԱԿԷՕԶԵՍՆ

Սուգ-էլ-Իթքարին

Կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդացեթի ինչպէս որից տարիներ, այս տարի եւս յատկապէս քերէ տուած է Զինական, Հնդկական եւ Սէրանի ընտիր եւ հոտաւէս թէյեր, որոնց գործածութիւնը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է:

Կը վաճառէ նաեւ մազի հաւար ընտիր ներկեր աւելն գոյնէ: Գինները յարաւոր:

Հետեւեալ գիտերը կը ծխաւորին Տիար Կարապետ Աստուածատի քով. Շէրիֆ Բաշա.

Փիղիկ Աղբօր Հարսնիք	դր. ողջ
Այիմէի Լեքայիմ, հայտատու եւ	1.5
Բրքաւառ գումարաւորներ	8 " "
Գրական Երազանք	50 սնդի.
Գագան Գօնա, գօնէսի	20 փր.
Մահմադիքի Միսկեւաթը	20 "

Ա Շ Ո Տ Փ Ա Լ Ա Ե Ս Ն

Տպագրական աւելն տեսլ գործերու կաշուանիս, փորագրից, թէ տուալի եւ թէ պիղնի վրայ, կը պատրաստուին նաեւ վաճառականական կնիքներ՝ մետաղէ եւ փայտէ:

Աղեքսանդրիս, Թրակ փողոց թիւ 22